№ 206 Նոյեմբերի 5 (17) 1881 Նոյեմբերի 5 (17) № 206

ՏԱՍՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 բուբլ, կէս տարվանը 6 բուբլ։
Առանձին համարները 5 կոպէկով։

Թիֆլիսում դրվում են միմիայն խմբագրատան մէջ։

Ստորագրացիր դիմում են ուղղակի
Тифлисъ. Редакція «Мшакъ»

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի եւ տոն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով։

Յայտարարութիւնների համար վճարվում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ։ Ներքին լուրեր։— ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ։ Գերմանիա։ Անգլիա և Իրլանդիա։ Նամակ Թիւրքիայից։—ՑԱՌՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ։—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ։ Դաստիարակութիւն հայերի մէջ։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Գ. Գրիգոր Կարագեօզեան գնեց մեր խմբագրատան մէջ մի հատ ժողովածու պ. Ֆիւրքճեանի Անիի աւերակների և վճարեց մեզ 20 բուբլ։

—

Ստացանք ԱՇՏԱՐԱԿ գիւղից 38 բուբլ 20 կոպէկ Վիէննայի «Ժուրնալ դ'Օրիան» լրագրի բաժանորդագին։ Գրվողները հետևեալ անձինք են։ Արշակ Տէր-Յովսէփեանց, Սարգիս քահ. Բղնունեանց, Ալէքսանդր Ղուկասեանց, Ն. Մ. Ալլահվէրդեանց, Սմբատ Միսակեանց, Կարապետ Փարսմանեանց, Սիմէոն Փարսմանեանց, Դէորգ Ղափանցեանց, Յակոբ Ազուսմանց, Խսահակ Շահազիզեան, Ալէքսան Մակարեանց, Զաքար Տէր-Յովսէփեանց, Սահակ Ազուսմանց, Մովսէս Բաբայեանց, Դէորգ Դարչինեան, Զորաբ Շահնազարեան, Զանիբեկ Ազուսմանց, Արսաշէս Մովսէսեան, Աբգար Մակարեան, Ռ. Տէր-Յովհաննիսեանց, Մկրտիչ վարդապետ, օր. Եփիսիմէ Սուքիասեանց, Սմասիա Սուքիասեանց, տիկին Թագուհի Սուքիասեանց և Սիմէոն Զարգարեան։

Առաջվայ 660 բուբլ 53 կոպ. փողի հետ կանի 698 բուբլ 73 կոպէկ։

—

Մայրաքաղաքի լրագիրները հաղորդում են, որ մեծ պասին թատրոնական ներկայացումներ տալու արգելքը վերաբերվում է միմիայն մայրաքաղաքների թատրոններին և ոչ թէ գաւառականներին, քանի որ այդ վերջիններին արգելել ներկայացումներ տալ մեծ պասին, կը նշանակէր կատարելապէս քանդել գաւառական թատրոնների գոյութիւնը։

—

Լրագիրները հաղորդում են որ եկող 1882 թուից պանդոկներից վճարվող հարկերը բարձրացած կը լինեն։ Այժմ պանդոկատէրերը Ս. Պետերբուրգի մէջ աշխատում են իրաւունք ստանալ առաւաւոտ անել մի ժամ աւելի օրվայ մէջ, այսինքն մինչև 12 ժամ գիշերվայ, այն ինչ մինչև այժմ պանդոկները իրաւունք ունէին բաց լինել միայն մինչև 11 ժամը գիշերվայ։

—

ՋԻԲՐԱՆՑԻԼԻՑ մեզ գրում են։ «Ներկայ տարվայ մայիս ամսում տեղիս հայ և թուրք գիւղացիները, կառավարութեան հրամանով աջողութեամբ կոտորեցին Արաքսի ափերում յայտնված մորեխը։ Նորերումս նոյն դաշտերում գտնվեցաւ մեծ քանակութեամբ մորեխի սերմը, որ և ներկայացվեցաւ վարչութեանը։ Ուրեմն գարնան դարձեալ մորեխ կերևայ մեր դաշտերի վրա։ Ժողովուրդը այժմ համոզված է որ միացած ոյժերով կարող է կոտորել երևեցած մորեխը, ինչպէս և փորձը ցոյց տուեց։ Բայց ցաւալին այն է, որ Պարսկաստանում սարսափելի մորեխ է յայտնվելու, որ և կանցնի, անշուշտ, մեր սահմաններից։ Իսկ Պարսկաստանում վնասակար միջատը չեն կոտորում։»

—

Մեզ գրում են ԲՈՒԹԱՑԻՍԻՑ որ մի ռուս պաշտօնեայ, քննիչ, սիրահարված լինելով մի հրէայ-գերեսանուհու վրա, այս օրերս պատկվեցաւ այդ օրիորդի հետ, առանց որ և է բաժինք պահանջելու։ Օրիորդը ամուսնանալուց առաջ ընդունեց քրիստոնէութիւնը։

—

«Մշակի» ներկայ համարի բանասիրական բաժնում տպում ենք անգլիական «Times» լրագրից թարգմանած մի յօդուած «Դաստիարակութիւն հայերի մէջ» վերնագրով։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԳԵՐՄԱՆԻԱ

—

Մինչև որ պարլամենտական ընտրութիւնները Գերմանիայում վերջացած չէին, իշխան Բիսմարկ ամեն միջոցներով նպաստում էր հակահրէական շարժմանը, իսկ այժմ երբ յետադէմ կուսակցութիւնը յաղթվեցաւ, հրէաների ղլխաւոր թշնամին, քարոզիչ Շտէօկկէր, ինչպէս հաւատացնում են, թագաժառանգի պահանջմամբ, հրաժարական ստացաւ իր պաշտօնից,—այժմ իշխան Բիսմարկ յայտնեց որ ամեն միջոցներ գործ կը դնի հակահրէական շարժմանը վերջ դնելու համար, քանի որ, ինչպէս ինքն հաւատացնում է, երբէք չէր համակրում այդ շարժմանը։ «Ես երբէք չեմ թոյլ տայ, ասաց պետական կանցլէր իր հրէայ բարեկամներից մինին, թոյլ տալով նրան որ հրատարակի լրագիրներում իր ասածները, որ գերմանական հրէաների քաղաքական իրաւունքները սահմանափակված լինեն։» Հրէաներին հալածելը դատապարտելի գործ է, աւելացրեց իշխանը, ինչ կէսից և նայէք այդ հալածանքների վրա, կրօնական թէ ցեղական տեսակէտից։ «Ես գիտեմ որ հրէաները իրանց բնաւորութեան յատկութիւնների շնորհով, մեծ մասամբ պատկանում են ընդդիմադրող կուսակցութեանը, բայց ես երբէք տարբերութիւն չեմ արել հրէայ և քրիստոնեայ օպոզիցիայի մէջ, որ իմ քաղաքականութեան դէմ էր ընթանում։» Ահա այն խօսքերը որ այժմ արտասանում է այն մարդը, որ մի քանի շաբաթ առաջ հրատարակապէս յայտնեց որ իրան շատ հաճելի են այնպիսի կանդիդատներ, ինչպէս Շտէօկկէր և այլ հակահրէականներն ու յետադէմները։

Ահա ի՞նչ է նշանակում ազատամիտ և առաջադէմ կուսակցութիւնների յաղթութիւնը, ահա ի՞նչ է նշանակում ընտրութիւնների մէջ ժողովրդի կամքի որոշ կերպով յայտնվելը։

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԻՒՆ ՀԱՅԵՐԻ ՄԷՋ

—

Հանգուցեալ աւագ-քահանայ Սոէնլէյի վերջին հրապարակական գործերից մէկը Երուսաղէմի դպրոցում գումարված միտինգում նախագահելն էր, որ ինկատի ունէր հայերի դաստիարակութեան չափերը։ Այդ դէպքը լուսաբանում է աւագ-քահանայի լայնածաւալ համակրութիւնները։ Նորա նկատմամբ յիրաւի կարելի է պնդել, որ նա հետաքրքրվում էր աշխարհիս ամեն մասերում գտնվող մարդկային ցեղին վերաբերեալ որ և է բարօրութեան և յառաջադիմութեան համար։ բայց մասնաւորապէս հետաքրքրվում էր նա այն վաղեմի ազգերի մասին, որոնք հին ժամանակներում բնակվել էին Միջերկրականի ափերում և նոյնպէս այն մեծ տարահարթում, որ հիմա յայտնի է իբրև Ասիական Ցամաքատան։ Այն քաղաքաթիւ գեղավայել ձօնեալ նուէրների մէջ, որոնք դրվեցան աւագ-քահանայի Նորակերտ գերեզմանի վրա, ոչ մէկը չունէր այն խորհրդաւոր նշանակութիւնը, որքան այն ծաղկահիւս պրակը, որ կրում էր այդ խօսքերը «Հնագոյն հայերից»։ Գանդուխտ գոլով մի օտար երկրում՝ դրանց սրտերը զգածվեցան այն իրողութեամբ, որ մի այդպիսի գերահռչակ անձն և այդչափ ընկղմված հրապարակական և անձնական գործերում, ուշադրութիւն դարձրեց մի մեկուսացած բազմաչարչար ժողովրդի վիճակի վրա։ Ո՞վքեր են հայերը և ինչ է այդ նրանց դաստիարակութեան խնդիրը, որ ներկայումս գրաւում է հրապարակական ուշադրութիւն։ Ես կը ջանամ պատասխանել այս հարցումներին ամենակարճ կերպով, որքան որ թոյլ կը տայ մի այդպիսի սահմանափակ յօդուածի շրջանը։

«Թայմսի» յօդուածագիրը նշանակում է Մեծն Հայաստանի սահմանները Վրաստան, Կովկասեան լեռները, Կասպից ծով, 38-րդ զուգահեռական գիծը հիւսիսային լայնութեան և Եփրատի արևմտեան ճիւղը։ իսկ դրա արևմտեան և հարաւային կողմում կայ, ասում է նա, փոքր Հայաստանը որ պարունակում է իր մէջ հիւսիսային Սիրիայի մի մասը, Կիլիկիան և Կարամանեան։ Նոյնպէս և Ուրֆա, որ Միջագետքումն է և Արգէս լեռան ստորոտում գտնվող Կեսարիան փոքր Հայաստանումն էին։ Նոյն յօդուածագիրը գովելով Հայաստանի մաքուր կլիման, ցոյց է տալիս որ դա կարող է մի ուժեղ և առողջ ցեղ առաջ բերել, և յետոյ շարունակում է այս խօսքերը։ Եւ արդարև հայերը միշտ այսպէս են եղել և հիմա էլ այսպէս են. ոչ մի երկրում հնար չէ ֆիզիկական ոյժի աւելի լաւ օրինակներ գտնել քան թէ այդ ցեղի ներկայացուցիչները, որոնք վանայ ծովի շրջակայքից գալիս են և. Պօլիս և ծառայում այնտեղի մաքսատան մէջ իբրև բեռնակիր։—Այդ մարդիկը միջին հասակից բարձր չեն, բայց լայն ուսեր և կորովի ու պինդ կազմուածք ունեն և իրանց մէջքին բեռներ են կրում, որոնց առաջ ամենուժեղ եւրօպացիք յուսակտուր կը դողային. դրանց բնական ոյժը ապացոյց է իրանց երկրի կլիմայի ազդեցութեանը։

Հայերը շատ կանուխ ընդունեցին քրիստոնէական կրօնը. նրանց թագաւորը մկրտվեցաւ կօնստանտինը քրիստոնէութիւնը դաւանելուց առաջ, և թէև ունեցել են շատ թշուառութիւններ, բայց հայերը միշտ պահել են իրանց կրօնը։ Մի քանի անընչան դէպքեր բաց առնելով, նրանք ոչ Հռոմի պապին, ոչ կ. Պօլսի յոյն պատրիարքին և ոչ ռուսաց Օրթոդոքս եկեղեցուն են ենթարկվել. չը նայելով որ բազդատաբար մի մեծամասնութիւն չեն կազմում, նրանք միշտ նախընտրել են ունենալ իրանց ջոկ եկեղեցին, որի կենտրոնը Ռուսաստանում լինող և տաճկաց և պարսից սահմանագլխի մօտ եղող Էջմիածինն է։ Վերջին տարիներում խնդիր կար, թէ արևմտեան Եւրօպայի բողոքական եկեղեցիք ճանաչեն արդեօք հայոց եկեղեցու հոգևորականներին իրանց համահաւասար թէ ոչ. բայց այդ խնդիրը իմ այս յօդուածի սահմանից դուրս է։ Սակայն շատ յարմար է և կարևոր յիշել, որ այդ հոգևորականները ընդհանրապէս յայտնի են իբրև անուս և իբրև այնպիսիք, որոնք ուղեցել են իրանց ժողովուրդը դարերով կոչտ ու կոպիտ տգիտութեան մէջ տեսնել։ Նոյն իսկ այս նոր ժամանակներումս, որ հայերի մէջ կրթութեան և ուսման փափաք է արթնացել, այդ փափաքը շատ սակաւ քաջալերութիւն է ստացել հայ հոգևորականների մեծամասնութեան կողմից։ Մենք «մեծամասնութիւն» ենք ասում, ըստ որում պէտք է թոյլ տալ, որ կան հայ հոգևորականների մէջ մի քանի անդամներ, որոնք խոր և գործնական կերպով աշխատում են իրանց ազգի լուսաւորութեան գործի համար։ Հայերի մէջ լաւ դպրոցներ հիմնելու դէմ եղող յաղթելի դժուարութիւնները արդարև քիչ չեն։ Դրանցից առաջինը և ամենամեծը անչուշտ ժողովրդի ընդհանուր չքաւորութիւնն է՝ բայց մանաւանդ քուն Հայաստան երկրում։ Հենց այս երկրումն են գտնվում բազմաթիւ հայեր և հենց այդտեղ էլ նրանք ենթարկված են իրանց դրացի քուրդերի հարստահարութիւններին։ Քուրդստանում և Եփրատի ափերում ապրող հայերի վիճակը վերջապէս իր վրա դարձրեց Եւրօպայի մեծ պետութիւնների ուշադրութիւնը, և յոյս էլ կայ որ ծանրակշիռ կարգադրութիւններ կը լինեն տաճկաց կառավարութեանը ստիպելու, որ նա իր այս պետութեան մասում գտնվող քրիստոնեայ հպատակներին իրական պաշտպանութիւն տայ։ Բայց պէտք է խոստովանել, որ Ցամաքատանի այս մասում տիրապետող անկարգութիւնը և ապօրինութիւնը մի նոր բան չէ։ Այդ մի պարզ իրողութիւն է, որ օսմանցի թիւրքերը փոքր Ասիան նուաճելուց յետոյ, դա միշտ այդպէս է եղել։ Հայերի և նեստորականների այդ երկարատև հալածակութիւնը կիսավայրենի քուրդերին, բերել հասցրել է նրանց ազգասութեան այն աստիճանին, որ պէտք է աչքով տեսնել ու այնպէս համոզվել։ Ցասը հազարներով հայեր փախել գընացել են Ռուսաստան, թողելով իրանց աւերակ գիւղերը և անապատ արտերը, որպէս զի սրանք վկայեն իրանց վրա տիրապետողների անատրբերութիւնը, եթէ չասենք նրանց դրական ամբաստանութիւնը։ Մնացող քրիստոնեայք բնակվում են ամենաթշուառ գիւղերում. անները կիսով չափ թաղված են գետնում, և այս մթին ստորերկրեայ գոմերում տեղացիք ժողովում են իրանց գաւակները և—բոլոր անասունները՝ այնպէս որ մարդիկը, կանայքը և որդիքը բնակվում են մի և նոյն սենեակում մրատեղ։ Հայերը հանգչելու համար պառկելիս լաւ գիտեն, որ ամենն մի պահում կարելի է կարթնացնեն նրանց կամ բարձր ազազակներով, կամ իրանց չար թշնամի քուրդերի հրացանների ձայնովը։ Նոյնպէս էլ գիտեն նրանք, որ եթէ իրանց հարստահարիչների հրամանները կատարելը ուշացնեն՝ իսկոյն չարաչար կը տուժեն և չեն կարող պրծնել։

Այս մարդիկը շարունակ կռի մէջ են իրանց կեանքի և օրական հացի համար. ուրեմն մենք թնչպէս սպասենք նրանցից, որ նրանք հոգան իրանց որդկերանց դաստիարակութեան համար։ Բայց այդու ամենայնիւ պէտք է ասել ի պատիւ նոցա, որ նոյն իսկ Հայաստանի և Քուրդստանի սրտում, ուր ամերիկացի միսիոնարները և ուրիշները սկսեցին դպրոցներ բաց անել հայերի գիւղերում, մեծաւ ուրախութեամբ ընդունելութիւն գտան. ժողովուրդը ոչ թէ միայն պատրաստ էր թերկրանօք ուղարկել իր զաւակները այդ դպրոցները, բայց իր խեղճ ապրուստի մի մասն անգամ տալ վարժապետներին ի հաշիւ նոցա թոշակի։ Մենք յիշեցինք այն երկիրները, որոնք սովորաբար յայտնի են Հայաստան անուանով, որովհետև հայերի թիւը այդ տեղերում համեմատաբար աւելի շատ է քան Ցամաքատանի մի որ և է ուրիշ մասնում։ Փոքր-Ասիայի արևմտեան մասնում, Միջագետքում և Ցաւրոս լեռների հարաւումն եղող Կիլիկիայում և հիւսիսային Սիրիայում բազմաթիւ հայեր կան, որոնք այն կոչտ վարչութեան չեն ենթարկված, որը իրանց ազգակիցները շատ տեսել են Ցամաքատանի հիւսիսային արևելքի նահանգներում։ Բազդատելով հէնց հիմա յիշված գաւառների հետ, դուք կը գտնէք կանոնաւորեալ կառավարութեան պէս մի բան, թէև չէ կարելի ասել թէ այդ կառավարութիւնը լաւ է և գործունեայ։ Ամենայն ուրեք ուր որ Ցամաքատանում կառավարութեան անունն արժանի մի բան կայ, այնտեղ հայերի և միւս քրիստոնեաների վիճակը ընդհանրապէս լաւանալու վրա է։ Ճշմարիտ է,